ԱԹԵՆԱԳՈՐԱՍ ԱԹԵՆԱՑԻ

ՄԵՌՅԱԼՆԵՐԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ[1]

Սկիզբը՝ թիվ Բ.

ԺԴ. Ուսմունքի կամ ուսումնասիրության ենթակա ցանկացած առարկայի ճշմարտացիության ապացույցն այն ժամանակ է ճշմարիտ հավաստիություն հաղորդում դրույթներին, երբ փոխառվում է ոչ թե ինչոր արտաքին տեղից եւ ոչ էլ նրանից, որ թվում կամ թվում էր ոմանց, այլ բոլորի համար ընդհանուր ու բնական իմաստից կամ ածանցված եւ հիմնական ճշմարտությունների կապից։ Քանզի խոսքը կա՛մ հիմնական ճշմարտությունների մասին է, եւ այդ դեպքում հարկավոր է միայն ցույց տալ բնական իմաստը, կա՛մ այնպիսի ճշմարտությունների մասին, որոնք բնականորեն բխում են առաջիններից եւ դրանց հետ ունեցած նրանց բնական կապից։ Այդ դեպքում հարկավոր է պահպանել դրանց հերթականությունը եւ ցույց տալ, որ դրանք իրականում բխում են հիմնական կամ նախկինում ապացուցված ճշմարտություններից, որպեսզի ճշմարտությունը եւ նրա ճիշտ ապացուցումը չարհամարհվեն, իր բնական կապից չկտրվի եւ չշփոթվի այն, ինչը բնությամբ գտնվում է կարգի մեջ եւ սահմանազատված է։ Ուստի, կարծում եմ, նրանք, ովքեր բարեխղճորեն զբաղվում են այս առարկայով եւ ցանկանում են առողջ դատել՝ արդյո՞ք կա մարդկային մարմինների հարություն, թե՞ ոչ, նախ պետք է ուշադիր դիտարկեն այստեղից հետեւող յուրաքանչյուր ապացույցի ուժը եւ այն, թե ինչ տեղ պետք է դրանցից յուրաքանչյուրը գրավի, որն է նրանցից առաջինը, որը երկրորդը, ու որն է դրանց մեջ վերջինը։ Իսկ դրանք բաշխելիս էլ առաջին տեղում հարկ է դնել մարդու արարման պատճառը, այսինքն՝ Արարչի մտադրությունը, որով Նա ստեղծել է մարդուն, որին հետո բնական է կցել արարված մարդու բնությունը, ոչ այն պատճառով, որ

[1] *Սույն աշխատությունը թարգմանվել է* «Сочинения древних христианских апологетов» (Санкт-Петербург, 1999) *հրատարակությունից, էջ 92–121։*

այն երկրորդական ապացույց է, այլ որովհետեւ հնարավոր չէ միանգամից քննել թե՛ մեկը, թե՛ մյուսը, չնայած դրանք չափազանց մոտ են իրար եւ հավասար ուժ ունեն նյութի վերաբերմամբ։ Երբ այս փաստարկներով, ինչպես առաջիններով, որոնք փոխառվում են Աստծու ստեղծագործական գործունեությունից, անկասկած, կապացուցվի հարությունը, այդ ժամանակ կարելի է դրա հավաստիությունը հաստատել նաեւ Աստծու Նախախնամության փաստարկներով։ Ես խոսում եմ ըստ արդար Դատաստանի յուրաքանչյուր մարդուն հասանելիք պարգեւի կամ պատժի, ինչպես նաեւ մարդկային կյանքի առաջիկա նպատակի մասին։ Շատերը, խորհելով հարության մասին, միայն երրորդ ապացույցին են տալիս ողջ ուժը՝ կարծելով, որ հարության պատճառը Դատաստանն է։

Սրա սխալականությունը հստակ բացահայտվում է նրանից, որ բոլոր մեռած մարդիկ հարություն են առնելու, սակայն ոչ բոլոր հարություն առածներն են դատվելու։ Քանի որ եթե միայն արդար Դատաստանը լիներ հարության պատճառը, ապա դրանից կհետեւեր, որ նրանք, որ չեն կատարել ո՛չ վատ, ո՛չ լավ գործեր, հարություն չեն առնելու, օրինակ՝ ամենափոքր երեխաները։ Սակայն հարությունը սահմանված է ինչպես բոլորի, այնպես եւ վաղ հասակում մահացածների համար։ Եւ վերջինն ապացույց է, որ հարության առաջնային պատճառը Դատաստանը չէ, այլ Արարչի դիտավորությունը եւ արարվածների բնությունը։

ԺԵ. Թեեւ բավարար է եւ մեկ պատճառ, որ տեսանելի էր մարդու արարման մեջ՝ ապացուցելու համար այն, որ հարությունը, բնական կարգի համաձայն, հետեւելու է մարմինների քայքայմանը, սակայն արդար կլինի ենթադրված փաստարկներից որեւէ մեկը բաց չթողնելը, այլ համաձայն նրա, ինչ ասվել է նրանց համար, որոնք չեն կարող տեսնել, ցույց տալ դրանցից յուրաքանչյուրի ուժը եւ նախեւառաջ ցույց տալ, թե ինչ նշանակություն ունի արարված մարդու բնությունը, որը բերում է միեւնույն համոզմունքին ու հավասարապես հաստատում է հարության հանդեպ հավատը։ Եթե ընդհանրապես մարդկային բնությունը բաղկացած է անմահ հոգուց եւ մարմնից, որոնք միավորված են արարչության ժամանակ, եթե ոչ ինքնին հոգու բնությանը, ոչ էլ մարմնի բնությանն առանձին Աստված չի շնորհել ինքնուրույն գոյություն եւ կյանք, այլ միայն մարդկանց, որոնք բաղկացած են հոգուց ու մարմնից, որպեսզի այդ մասերով, որոնցից նրանք բաղկացած են, երբ ծնվում են ու ապրում, այս կյանքի ավարտին հասնեն մեկ ընդհանուր ավարտի, ապա հոգին ու

մարմինը մարդու մեջ կազմում են մեկ կենդանի էակ, որը կրում է և՛ այն, ինչ հատուկ է հոգուն, և՛ այն, ինչ հատուկ է մարմնին, գործում եւ կատարում է այն, ինչը վերաբերում է զգայական կամ բանական ընկալմանը, այդ պատճառով լիովին անհրաժեշտ է, որ այդպիսի բաղադրությունն ամբողջապես ուղղված լինի մեկ վախճանի, որպեսզի մեկ ներդաշնակության եւ ընդհանուր համաձայնության գան ամեն ինչ եւ բոլոր կողմերից՝ մարդու արարումը, մարդկային բնությունը, մարդկային կյանքը, գործունեությունն ու շարչարանքը, կենսակերպը եւ բնությանը համապատասխան վերջին վիճակը։ Իսկ եթե կան միություն եւ ներդաշնակություն այս կենդանի էակի մեջ, եթե կա համաձայնություն հոգու գործողությունների եւ մարմնի գործունեության մեջ, ապա պետք է նույնը լինի նաեւ վերջնանպատակը այս ամենի։ Իսկ վերջնանպատակը միակը կլինի, եթե կենդանի էակը կարգված հայտնի վախճանին [հասնելիս] լինի իր նույն բաղադրությամբ։ Այն կլինի կատարելապես նույն այդ կենդանի էակը, երբ կունենա բոլոր այն մասերը, որոնցից ինքը բաղկացած է։ Իսկ այդ մասերը միայն այն ժամանակ կհայտնվեն իրենց հատուկ միությամբ, երբ նրանց այն մասը, որ քայքայվել է, կրկին միավորվի կենդանի էակի բաղադրության մեջ։ Իսկ մարդկանց նույն բաղադրության կազմվելը, ըստ անհրաժեշտության, տանում է հարությանն այն մարմինների, որոնք մահացել եւ քայքայվել են։ Քանզի առանց դրանց նույն մասերը չէին միավորվի իրար հետ բնությամբ, եւ չէր վերականգնվի միեւնույն մարդկանց բնությունը։ Եթե միտքը եւ բանականությունը տրված են մարդկանց մտաճանաչելի իրերը հասկանալու համար, ոչ միայն արարվածների էությունները, այլեւ բարությունը, իմաստությունն ու ճշմարտությունը Նրա, Ով շնորհել է դրանք, ապա անհրաժեշտ է, որ եթե շարունակում են գոյություն ունենալ այն առարկաները, որոնց համար տրվել է բանականությունը, շարունակեր գոյություն ունենալ եւ հենց շնորհն այս դատողությունները կատարելու ունակության։ Իսկ վերջինս չի կարող լինել, եթե գոյություն չունի այն բնությունը, որին շնորհվել եւ որի մեջ գտնվում է այն։ Իսկ արարածը, որն ստացել է միտք եւ բանականություն, այսինքն՝ մարդը, ինքնին միայն հոգի չէ, հետեւաբար՝ մարդը պետք է միշտ մնա ու բաղկացած լինի հոգուց եւ մարմնից, իսկ այդպես նա չի կարող մնալ, եթե հարություն չառնի։ Քանի որ եթե հարություն չկա, ապա մարդու բնությունը չի մնա որպես մարդկային բնություն։ Իսկ եթե մարդկային բնությունը դադարի գոյություն ունենալուց, ապա իզուր

է հոգին միավորվել մարմնի տկարությունների եւ նրա վիճակների հետ, իզուր է նաեւ մարմինը կանգնեցվում իր ձգտումներին հասնելիս՝ հոգու սանձով ուղղորդվելով եւ զսպվելով։ Իզուր է մտքի գոյությունը, իզուր են բանականությունն ու ճշմարտության պահպանումը կամ ամեն տեսակի առաքինությունների մեջ վարժվելը, իզուր են օրենքներն ու կանոնները եւ, ընդհանրապես, մարդկանց մեջ եղած ու նրանց համար ամեն հիասքանչը, կամ, ավելի լավ է ասել, իզուր է մարդկանց արարումն իսկ եւ նրանց բնությունը։ Իսկ եթե, անկասկած, Աստծու բոլոր գործերում եւ Նրանից ելնող բոլոր շնորհների մեջ չկա որեւէ զուր բան, ապա լիովին անհրաժեշտ է, որ անմահ հոգուն համապատասխանի հավերժ գոյություն եւ մարմին՝ իրեն համապատասխան բնությամբ հանդերձ։

ԺԶ. Թող չզարմանան՝ կյանքը, որն ավարտվում է մահվամբ ու քայքայմամբ, մենք անվանում ենք գոյություն՝ նկատի ունենալով, որ այս արտահայտությունը մեկ իմաստ, իսկ գոյություն ունենալը մեկ չափանիշ չունեն, քանի որ գոյություն ունեցողների բնությունը եւս մեկը չէ։ Քանի որ գոյություն ունեցողներից յուրաքանչյուրը գոյություն ունի իր իսկ բնությանը համապատասխան, եւ որեւէ մեկը չպետք է փնտրի նույնպիսի գոյություն ընդհանրապես անապական ու անմահ էակների մեջ, քանի որ առավել կատարյալ էակները չեն հավասարվում ստորինների հետ։ Ոչ էլ մարդկանց մեջ է կարելի փնտրել այդպիսի անփոփոխ գոյություն։ Առաջիններն ստեղծված են անմահ հենց սկզբից եւ անվախճան կերպով մնում են Աստծու բացառիկ կամքով, իսկ մարդիկ հոգով, ըստ արարչության, ունեն անընդհատ կեցություն, իսկ մարմնով անապականություն են ստանում փոփոխությունից հետո։ Այսպիսին է հարության մասին ուսմունքի իմաստը։ Դա նկատի ունենալով՝ սպասում ենք մարմնի քայքայմանը, որը հետեւում է տկար ու ապականացու կյանքին, եւ դրանից հետո հույս ունենք գոյություն ունենալ անապականության մեջ։ Այսպիսով՝ չենք հավասարեցնում մեր մահը կենդանիների մահվանը եւ մարդկանց կեցությունը՝ անմահների կեցությանը, որպեսզի այդպիսով մարդկային բնությունն ու կյանքը անմտաբար բացարձակապես տարբեր էակների հետ նույն մակարդակի վրա չդնենք։ Այսպիսով՝ պետք չէ վշտանալ, եթե ինչ-որ անհավասարություն է դիտարկվում մարդկանց գոյության մեջ[2], եւ պետք չէ մերժել հարությունն այն բանի համար, որ հոգու անջատու-

[2] *Այսինքն՝ մաքուր հոգիների՝ հրեշտակների հետ համեմատած։*

մը մարմնի մասերից եւ այդ մասերի քայքայումը խախտում են կյանքի անընդհատությունը։ Քանի որ զգայությունների եւ մարմնական ուժի թուլացման հետ մեկտեղ, որ բնականորեն տեղի է ունենում քնի ժամանակ, ըստ երեւույթին, նույնպես ընդհատվում է կյանքը, որ կազմված է գիտակցական զգացողությունից, քանզի մարդիկ քնում են հայտնի ժամանակահատվածում եւ կարծես կրկին վերադառնում են կյանքի, սակայն մենք չենք հրաժարվում այդպիսի վիճակը կյանք անվանելուց։ Այդ պատճառով, կարծում եմ, ոմանք քունը մահվան եղբայր են կոչում, ոչ թե որ դրանք միեւնույն «նախնիներից» կամ «ծնողներից» ծագած են համարում, այլ մահացածների ու քնածների վիճակների միանմանության, հանգստության եւ գոյություն ունեցող ու կատարվող ամեն ինչի, նույնիսկ սեփական կյանքի գոյության հանդեպ անզգայության տեսանկյունից։ Այսպիսով՝ եթե մենք մարդկանց կյանքը, չնայած որ այն ենթակա է այդպիսի փոփոխությունների սկզբից մինչեւ քայքայումը եւ դադարներ է կրում վերոհիշյալ բոլոր պարագաներից, այնուամենայնիվ, չենք հրաժարվում կյանք կոչելուց, ուստի չպետք է մերժենք եւ այն կյանքը, որ հաջորդում է քայքայմանը, որը կբերի հարությունը, թեեւ այդ կյանքն ընդհատվում է որոշ ժամանակով հոգու եւ մարմնի բաժանման պատճառով։

ԺԷ. Քանզի այդպիսին է մարդկանց բնությունը, սկզբից եւ Արարչի մտադրությամբ այն որպես բաժին ստացել է փոփոխությունների ենթարկվելը եւ ունի ոչ միանման կյանք ու կեցություն, այլ ընդհատվող՝ մեկ քնով, մեկ մահվամբ, մեկ ամեն տարիքի փոփոխություններով, քանի որ գալիք տարիքը հստակ չի դիտարկվում նախորդում։ Ո՞վ կհավատար, եթե փորձից սովորած չլիներ, որ անտարբեր ու անձեւ սերմի մեջ պարփակված են այդքան շատ եւ մեծ զորություններ, մասերի այդքան բազմազանություն, որոնք առաջանում ու ձեւավորվում են նրա մեջ, ինչպես ոսկրերի, նյարդերի, աճառների, բացի դրանցից՝ մկանների, մսի, ներքին օրգանների ու մարմնի այլ բաղկացուցիչների։ Ո՛չ թաց սերմերի մեջ է այդ ամենը երեւում, ո՛չ մանուկների մեջ նկատվում այն, ինչը բացահայտվում է պատանիների մեջ, ո՛չ էլ պատանեկան հասակում այն, ինչը հատուկ է հասուն մարդկանց, ո՛չ էլ վերջինների մեջ այն, ինչը լինում է ծերերի մեջ։ Թեեւ հիշյալ տարիքներից որոշները երբեմն խիստ ցայտուն չեն դրսեւորվում, իսկ մյուսները հստակ չեն ներկայացնում բնական հաջորդականությունն ու փոփոխությունները, որոնք տեղի են ունենում մարդկային բնության մեջ, սակայն նրանք, ովքեր իրենց կույրի

տեղ չեն դնում չարամտորեն կամ գործի ուսումնասիրության հարցում անփութության պատճառով, գիտեն, որ նախեւառաջ պետք է սերմերը գցվեն, որպեսզի երբ առանձին մասերից ու անդամներից կազմվելուց հետո պտուղը լույս աշխարհ գա, սկսվի առաջին հասակի զարգացումը, այդ զարգացմանը հետեւի հասունությունը, հասունությանը՝ բնական ուժերի նվազումը մինչեւ ծերություն, իսկ հետո՝ զառամյալ մարմինների քայքայումը։ Այսպիսով՝ այստեղ թեեւ ո՛չ սերմն է հստակ ցույց տալիս մարդկային ուրվագծված կյանքը կամ նրա տեսակը, ոչ կյանքն է ցույց տալիս հաջորդող քայքայումը նախնական տարրերի, սակայն բնական երեւույթների կարգը հավատ է ներշնչում այն բանի հանդեպ, ինչը դեռ չի հաստատվել ինքնին երեւույթներով, իսկ բանականությունը, առավել եւս, քննելով ճշմարտությունը բնական կարգով, հավաստիանում է հարության մեջ՝ ունենալով անհրաժեշտ եւ փորձից ավելի զորավոր հիմքեր ճշմարտության հաստատման համար։

ԺԸ. Մեր վերն առաջարկած բոլոր ապացույցները, որոնք հաստատում են հարության իրողությունը, նույն տեսակի են, քանի որ ծագում են միեւնույն սկզբից, իսկ այդ սկիզբն առաջին մարդկանց ստեղծումն է արարչության միջոցով։ Սակայն դրանցից որոշները հաստատվում են առաջին սկզբի հիմամբ, որից առաջացել են, իսկ մյուսները, որ բխում են մարդկային բնությունից եւ կյանքից, փոխառում են իրենց հավաստիությունը մեր մասին Աստծու նախախնամությունից։ Քանզի նպատակը, որով եւ որի համար մարդիկ ստեղծվել են, սերտ կապ ունենալով մարդկային բնության հետ, ուժ է ստանում արարչությունից, իսկ ապացույցը, որ փոխառվում է այն արդարադատությունից, որով Աստված դատում է բարեպաշտորեն եւ անբարեպաշտորեն ապրած մարդկանց, ուժ է ստանում դրանց նշանակությունից. թեեւ Դատաստանը եւ մարդկանց նշանակությունը ծագում են այդտեղից՝ արարչությունից, սակայն առավել հաստատվում են նախախնամությամբ։ Որքան հնարավոր է, առաջին փաստարկները բացահայտելուց հետո լավ է ապացուցել դիտարկվող ճշմարտությունը նաեւ վերջինների միջոցով։ Ես խոսում եմ համաձայն արդար Դատաստանի յուրաքանչյուր մարդուն սպասվող պարգեւի կամ պատժի, ինչպես նաեւ մարդկային կյանքի նպատակի մասին։ Եւ սրանից առաջ պետք է զետեղել այն, ինչը բնականորեն նախորդում է, եւ նախ դիտարկել Դատաստանի մասին միտքը։ Այստեղ, հոգալով պատշաճ հիմնավորության եւ շարադրման կարգի մասին, միայն մեկ բան կավելաց-

նեմ, որ հենց նրանք, ովքեր ընդունում են Աստծուն որպես ամենայնի Արարիչ, եթե կամենում են հավատարիմ լինել իրենց սկզբունքներին, անհրաժեշտաբար պետք է ենթադրեն, որ ողջ արարչությունը գտնվում է Նրա իմաստության, ճշմարտության պահպանության եւ նախախնամության ներքո։ Այսպես դատելով՝ պետք է ընդունեն, որ որեւէ բան թե՛ երկրի վրա, թե՛ երկնքում հնարավոր չէ խլել Աստծու վերահսկողությունից ու նախախնամությունից, եւ որ Աստծու խնամքը տարածվում է ամեն ծածուկ ու ակնհայտ, մեծ ու փոքր բաների վրա։ Քանի որ ողջ արարչությունը եւ յուրաքանչյուր արարած մասնավորաբար, իրենց բնության եւ նշանակության համեմատ, ինչի համար նրանք ստեղծվել են, ունեն Արարչի նախախնամության կարիքը։ Կարծում եմ՝ ունայն սնափառության դրսեւորում կլինի այժմ խորամուխ լինելն այն մանրամասնությունների մեջ, թե ինչն է հատուկ յուրաքանչյուր առարկայի բնությանը։ Բայց մարդը, որի մասին պետք է հիմա խոսենք, որպես տկար [էակ], ունի սննդի կարիք, որպես մահկանացու՝ սերնդի, որպես բանական՝ արդարադատության։ Իսկ եթե այդ պահանջմունքներից յուրաքանչյուրը հատուկ է մարդուն իր բնությամբ, եւ նա սննդի կարիք ունի կյանքի ապահովման, զավակների կարիք՝ սերնդի շարունակության, արդարադատության կարիք՝ օրինական ճանապարհով սնունդ ու սերունդ ունենալու համար, ապա անհրաժեշտ է, որ ինչպես սնունդն ու ժառանգականությունն են վերաբերում նրա էության երկու մասերին, այդպես եւ արդարադատությունը տարածվի երկու մասերի վրա, այսինքն՝ ամբողջ մարդու՝ բաղկացած հոգուց ու մարմնից, որպեսզի մարդը ենթակա լինի Դատաստանի իր բոլոր գործերի համար ու դրանց համար արժանանա պարգեւի կամ պատժի։ Եթե արդար Դատաստանն ըստ գործերի հատուցում է սահմանում երկու մասերի համար էլ, եւ միայն հոգին չպետք է հատուցի այն ամենի համար, ինչ կատարել է մարմնի հետ միասին, քանի որ այն ոչ թե ինքն իրեն է հակվում սննդի կամ զգայական այլ բարիքների [հետ կապված] մարմնական հաճույքներին վերաբերող մեղքերին, եւ ոչ էլ միայն մարմինն է [դա անում], քանի որ այն ինքն իրեն ունակ չէ դատելու օրենքի ու արդարադատության մասին, այլ այդ երկուսից բաղկացած մարդն է ենթակա Դատաստանի իր բոլոր գործերի համար։ Այնինչ բանականությունը չի գտնում այդ հատուցումը ներկա կյանքում, քանի որ այն ըստ արժանվույն չկա. շատ անաստվածներ, կատարելով ամեն տեսակի անօրինություն եւ պղծություն, դժբախտությամբ չեն պատժվում

մինչեւ մահը, եւ հակառակը՝ նրանք, ովքեր իրենց կյանքն անց են կացնում ամենայն առաքինությամբ, ենթարկվում են վշտի, վիրավորանքի, բանսարկությունների, տանջանքի ու ամեն տեսակի փորձությունների։ Մահվանից հետո եւս [բանականությունը հատուցում չի գտնում], քանի որ [մահից հետո] մարդը դեռեւս երկու մասից չի բաղկացած, քանի դեռ հոգին բաժանվել է մարմնից, իսկ մարմինը քայքայվել է այն տարրերի մեջ, որոնցից կազմված էր, եւ իր նախկին բնությունից կամ տեսքից չի պահպանում որեւէ բան՝ ոչ իսկ հիշողությունը կատարածի մասին, ուստի հետեւությունն ակնհայտ է բոլորի համար. անհրաժեշտ է, որ, ըստ առաքյալի, այս ապականացուն եւ տարրալուծվողն անապականությամբ զգեստավորվի, որպեսզի երբ մեռյալները կենդանանան հարության միջոցով, եւ նորից վերամիավորվի բաժանվածը կամ ամբողջովին քայքայվածը, յուրաքանչյուրն ստանա ինչ որ հարկն է իր համար, ինչ կատարել է մարմնով՝ բարի կամ չար (Ա. Կորնթ. ԺԵ. 53, Բ. Կորնթ. Ե. 10)։

ԺԹ. Այսպիսով՝ նրանց, ովքեր ճանաչում են Նախախնամությունը եւ մեզ հետ ընդունում են միեւնույն սկզբունքները, սակայն հետո, չգիտեմ ինչպես, հետ են կանգնում սեփական դրույթներից, թող ամենքն առաջարկեն այս դատողությունները, եւ նույնիսկ սրանցից ավելին, եթե կցանկանան առավել ծավալուն շարադրել այն, ինչը շատ տեղերում կարճառոտ ու հպանցիկ է ասված։ Իսկ նրանց, ովքեր տարբերվում են հենց հիմքում, օգտակար կլիներ այլ սկիզբ առաջարկել՝ ցույց տալով կասկածն այն բանով, որ իրենք քննում են, եւ նրանց հետ միասին դատելով այսպես. արդյո՞ք լիովին անուշադրության են մատնված կյանքը եւ մարդկանց ամբողջ վարքագիծը, արդյո՞ք երկրի վրա ինչ-որ խորին խավար է տարածված, որն անգիտությամբ ու մոռացությամբ է ծածկում մարդկանց եւ նրանց գործերը, թե՞ ավելի անվտանգ է մտածել, որ Արարիչը ղեկավարում է Իր արարածներին, վերահսկում է գոյություն ունեցող ամեն ինչ եւ կատարվող ամեն բան, Դատավոր է գործերի ու մտադրությունների։

Եթե մարդկային գործերի համար երբեւէ որեւէ դատաստան չլիներ, մարդիկ որեւէ առավելություն չէին ունենա կենդանիներից կամ նույնիսկ ավելի դժբախտ կլինեին նրանցից, քանի որ մարտնչում են կրքերի դեմ եւ հոգում բարեպաշտության, ճշմարտության եւ մյուս առաքինությունների մասին, իսկ անասնական կյանքը կլիներ ամենալավը, առաքինությունը՝ անհեթեթություն, Դատաստանի սպառնալիքը՝ չափազանց ծիծա-

ղելի, ամեն տեսակի հաճույքներ վայելելը՝ ամենամեծ բարիքը, եւ բոլորի համար ընդհանուր ուսմունքն ու միակ օրենքը կլիներ անժուժկալների եւ հեշտասերների սիրելի կանոնը՝ «Ուտենք ու խմենք, որովհետեւ վաղը մեռնելու ենք» (Ես. ԻԲ.13, Ա. Կորնթ. ԺԵ. 32)։ Այսպիսի կյանքի ավարտը ոչ թե հաճույք է, ինչպես կարծում են ոմանք, այլ կատարյալ անզգայություն։ Իսկ եթե մարդկանց Արարիչը հոգատար է Իր արարածների նկատմամբ եւ բարի ու չար արարքների միջեւ տարբերություն է դնում, ապա դա կատարվելու է կա՛մ այս կյանքի ընթացքում, երբ դեռ ապրում են առաքինի կամ չար մարդիկ, կա՛մ մահվանից հետո, երբ նրանք բաժանման ու քայքայման կենթարկվեն։ Սակայն թե՛ առաջին եւ թե՛ երկրորդ դեպքում չի կարող արդար դատաստան լինել, քանի որ ներկա կյանքում ոչ բարիներն են առաքինությունների համար ստանում արժանին, ոչ էլ չարերը՝ իրենց անիրավության համար։ Նույնիսկ չեմ խոսում այն մասին, որ քանի դեռ մեր բնությունը մնում է այս վիճակում, որում հիմա գոյում ենք, մահկանացու բնությունը չի կարող տանել այն պատիժները, որոնք համապատասխան կլինեին բազմաթիվ եւ շատ ծանր հանցանքներին։ Այսպես՝ ավազակը, տիրակալը եւ բռնապետը, որոնք անարդարացիորեն սպանել են անհամար թվով մարդկանց, իրենց մի մահով չեն կարող հատուցել նրանց դեմ գործած չարիքի համար։ Նույնպես՝ անօրեն սրբապիղծը, որ ճշմարիտ պատկերացում չի ունեցել Աստծու մասին, տրվել է ամեն տեսակի ծաղրանքի եւ չարախոսության, անարգել է աստվածայինը, ոտնահարել օրենքները, պղծել է երեխաներին ու կանանց, անարդարորեն ավերել է քաղաքներ, այրել տներ՝ դրանց բնակիչներով հանդերձ, ամայացրել շրջաններ, բնաջնջել բազմաթիվ մարդկանց կամ նույնիսկ ամբողջական ազգի, ինչպե՞ս կարող է նա իր ապականացու մարմնում ստանալ այս չարագործություններին համարժեք պատիժ, եթե մահը, կանխագործելով, [ազատում] է նրան արժանի պատժից, եւ նրա մահկանացու բնությունը բավարար չէ իր կատարած հանցագործություններից նույնիսկ մեկի դիմաց հատուցման համար։ Ուստի ո՛չ ներկա կյանքում է երեւում արդար դատաստանը, ո՛չ էլ՝ մահվանից հետո։

Ի. Մահը կա՛մ կյանքի վերջնական դադարումն է, այնպես որ հոգին մարմնի հետ փտում ու քայքայվում է, կա՛մ հոգին մնում է միայնակ, անտարրալուծելի, անկործանելի, անոչնչանալի, եւ քայքայվում է միայն մարմինը՝ չպահպանելով որեւէ հիշողություն գործածի մասին ու ոչ մի զգացողություն այն ամենի առնչությամբ, ինչ կրել է հոգու ազդեցու-

թյամբ։ Եթե մարդկային կյանքն ամբողջովին հանգչում է, ապա արդեն մահացած մարդկանց մասին որեւէ հոգածություն չկա, որեւէ դատաստան՝ նրանց հանդեպ, որոնք ապրել են առաքինի կամ պիղծ կյանքով։ Իսկ այդ դեպքում տեղի կունենան անօրեն կյանքի ամենն տեսակի չարագործություններ, այդպիսի կյանքի հետ կապված բազում նենգություններ, եւ այդ անօրինություններից գլխավորը՝ անաստվածություն։ Եթե քայքայման է ենթարկվում միայն մարմինը, եւ նրա քայքայված բոլոր մասերն անցնում են իրենց հատուկ տարերքներին, իսկ հոգին՝ որպես անապական, մնում է միայնակ, ապա այս դեպքում նրա հանդեպ դատաստան չի կարող լինել, քանի որ այստեղ արդարադատություն չկա։ Սակայն անհեթեթ է ենթադրել, թե իբր Աստծուց կամ Նրա առաջ կարող է լինել որեւէ դատ, որտեղ չկա ճշմարտություն, իսկ ճշմարտություն չի լինի այն դատի ժամանակ, որտեղ ներկա չէ նա, ով արդար կամ անարդար գործ է կատարել։ Իսկ կյանքում այն ամենը, ինչի համար դատ է իրականացվում, կատարել է մարդը, այլ ոչ թե միայն հոգին։ Կարճ ասած՝ այդպիսի դատը չէր կարող որեւէ արդարություն պահպանել։

ԻԱ. Եթե բարի գործերի համար պետք է պարգեւատրվել, ապա ակնհայտ է, որ արդարացի չի լինի մարմնի հանդեպ, որը բարի գործեր կատարելիս հոգու հետ մասնակցել է ջանքերին, սակայն մաս չունի բարի գործերի համար տրվող պարգեւից. նաեւ այն պարագայում, երբ հոգին հաճախ ներում է ստանում մարմնի տկարության եւ կարիքների համար գործված որոշ զանցանքների դեպքում, մարմինն ինքը զրկված կլինի բարի գործերին մասնակցելու համար տրվող պարգեւից, այնինչ կյանքի ընթացքում ինքը եւս ջանացել էր հոգու հետ միասին։ Մեղսագործությունները դատապարտելիս եւս չի պահպանվում արդարադատությունը հոգու հանդեպ, եթե նա միայնակ պատժվի այն մեղքերի համար, որոնք գործել է մարմնի դրդմամբ՝ հրապուրված նրա ցանկություններով կամ մղումներով՝ երբեմն հանկարծակի եւ ասես ծածուկ, երբեմն որոշ հարկադրանքով, երբեմն էլ մարմինը պահպանելու խնամատարության բարեձեւ պատրվակով։ Կամ ի՞նչ արդարություն կլիներ միայն հոգուն ենթարկել դատաստանի այն բանի համար, ինչի նկատմամբ իր բնությամբ ո՛չ տենչանք ունի, ո՛չ հակում կամ ձգտում. օրինակ՝ շքեղությունը կամ բռնությունը, ագահությունը կամ անարդարությունը եւ դրանցից առաջացող արատները,— այսպիսի չարագործությունների մեծ մասը լինում է այն պատճառով, որ մարդիկ չեն զսպում իրենց ալեկոծող կրքերը, իսկ

կրքերն առաջանում են մարմնի պահանջներից ու կարիքներից, նրա հանդեպ հոգածությունից եւ նրան գոհացնելուց, քանի որ հանուն դրա են ամեն ընչասիրություն ու հաճույք,— նույնպես եւ ամուսնությունն ու կենցաղային բոլոր գործերը, որոնց մեջ եւ որոնց առնչությամբ մեկը դատապարտելի է համարվում, իսկ մյուսը՝ ոչ, այդ դեպքում որտե՞ղ է արդարադատությունը, եթե միայն հոգին է դատաստանի ենթարկվելու այն բաների համար, որոնց հանդեպ նախապես մղում է զգում մարմինը, ապա հրապուրում հոգուն համագործակցել ու հաղորդակցվել այն գործերում, որոնք իրեն են հարկավոր։ Եթե ուժեղ հակումները եւ հեշտասիրական կրքերը, ինչպես նաեւ վախերն ու տխրությունը, որոնց մեջ ամենայն անժուժկալություն ենթակա է դատապարտման, գործվում են մարմնից, իսկ դրանցից առաջացող մեղքերն ու դրանց համար պատիժները բաժին են ընկնելու միայն հոգուն, որն այդպիսի որեւէ բանի կարիք չունի, տոփանք չի զգում, չի վախենում եւ ինքնին չի զգում այնպիսի որեւէ բան, որը սովորաբար զգում է մարդը։ Եթե նույնիսկ ենթադրենք, որ կրքերը միայն մարմնինը չեն, այլ նաեւ մարդու հոգունն են, որ եւ արդար է, քանի որ մարդու միասնական կյանքը ձեւավորվում է երկուսից էլ, սակայն չենք կարող ասել, որ դրանք միայն հոգուն են պատկանում, եթե այս բնությունն առանձին ենք դիտարկում։ Քանի որ եթե այն բոլորովին չունի սննդի կարիք, ապա երբեք չի կարող ձգտել դրան, ինչի անհրաժեշտությունն իր գոյության համար չունի, չի կարող հետամտել այնպիսի բանի, ինչից ընդհանրապես չի կարող օգտվել։ Երբեք չի սգա փողի կամ ունեցվածքի պակասության պատճառով, քանի որ դրանք բոլորովին անօգուտ են իր համար։ Եթե այն վեր է ապականությունից, ապա չի վախենում որեւէ բանից, ինչը կարող է իր մահվան պատճառը դառնալ. չի վախենում սովից, հիվանդությունից, անդամահատումից, վերքերից, կրակից, երկաթից, քանի որ սրանցից որեւէ վնաս կամ հիվանդություն չի կարող կրել, քանի որ նրան բացարձակապես չեն դիպչում ո՛չ մարմինները, ո՛չ մարմնականները։ Իսկ եթե կրքի հանդեպ հակումները վերապահենք հենց հոգուն, ապա անհեթեթ են այն հանցանքները, որ նա է կատարում, եւ դրանց համար տրվող պատիժները միայն հոգու համար սահմանելը չափազանց անարդար եւ անարժան է Աստծու Դատաստանի դեպքում։

ԻԲ. Բացի այդ՝ արդյո՞ք անհեթեթ չէ, որ առաքինությունն ու արատը մարմնից առանձին՝ միայն հոգու մեջ [լինելը] նույնիսկ աներեւակայե-

լի ենք համարում, քանի որ առաքինություններն ընդունում ենք որպես մարդու առաքինություններ, ինչպես եւ դրանց հակառակ մոլությունները, ու ոչ թե միայն հոգուն ենք վերագրում, որը մարմնից առանձին ինքն իրեն գոյություն ունի, իսկ դրանց համար պարգեւը կամ պատիժը վերագրում ենք միայն հոգուն։ Ինչպե՞ս երեւակայել, որ արիությունն ու հաստատակամությունը միայն հոգունն են, երբ այն [բնությամբ իսկ] չի վախենում ո՛չ մահվանից, ո՛չ վերքերից, ո՛չ անդամահատությունից, ո՛չ վնասից, ո՛չ հարվածներից, ո՛չ դրանցից առաջացող տառապանքներից կամ վշտերից։ Ինչպե՞ս միայն նրա մեջ պատկերացնել ժուժկալությունն ու ողջախոհությունը, երբ այն չի հակվում որեւէ ցանկության՝ սննդի, սեռական հարաբերության կամ այլ հաճույքների ու վայելքների, երբ ոչ ներսից է որեւէ բան գրգռում նրան, ոչ էլ դրսից է դրդում։ Ինչպե՞ս միայն նրա մեջ պատկերացնել խոհեմությունը, երբ նրան չի պատկանում այն, ինչի վրա պետք է ազդի կամ չազդի, որը կարող է ընտրել կամ որից փախչել կամ, ավելի ճիշտ, երբ նրա մեջ չկա որեւէ շարժում կամ բնական ձգտում ինչ-որ արտաքին գործունեության։ Ինչպե՞ս կարող է հոգիներին հատուկ լինել արդարությունն իրար հանդեպ կամ ինչ-որ այլ՝ միատեսակ կամ տարատեսակ բանի հանդեպ, երբ նրանք չունեն ինչու, ինչով եւ ինչպես՝ ըստ արժանվույն կամ ըստ համարժեքության օրենքի հատուցելու հնարավորություն՝ բացառությամբ Աստծու պաշտամունքը, երբ նրանք չունեն ձգտում կամ դրդում սեփականը կամ օտարինն օգտագործելու, երբ համապատասխան բաներից օգտվելը կամ ինքնազսպումը հատուկ են նրանց, ովքեր այնպես են ստեղծված, որ կարողանան օգտվել. այնինչ՝ հոգին որեւէ բանի կարիք չունի եւ այնպես չի կերտված, որ օգտվի մեկից կամ մյուսից, ուստի նրանում, այդպես կերտված լինելու շնորհիվ, չի կարող լինել շահամոլություն։

ԻԳ. Եւ ամենից անհեթեթն այն է, որ կարգված օրենքները վերաբերում են մարդկանց, իսկ օրինավոր եւ ապօրինի գործերի համար հատուցումն ուղղում են միայն հոգիներին։ Եթե հանցագործության համար պատիժն ըստ արդարության պետք է ընդունի նա, ով ստանձնել է օրենքը, իսկ օրենքն ստանձնել է մարդը, ոչ թե առանձին հոգին, ապա եւ պատիժը զանցանքների համար պետք է կրի մարդը, ոչ թե միայն հոգին։ Աստված հոգուն չի պատվիրել իրեն զերծ պահել այն բաներից, որոնք բոլորովին հատուկ չեն իրեն, օրինակ՝ շնությունից, սպանությունից, գողությունից, հափշտակությունից, ծնողներին անարգելուց եւ ընդհան-

բապես մերձավորին վիրավորանք ու վնաս հասցնող ամեն ցանկությունից։ «Պատվի՛ր քո հորն ու մորը» պատվիրանը (Ելք Ի. 12, Ղուկ. ԻԸ. 20) միայն հոգիներին չի վերաբերում, քանզի այդ անունները նրանց հատուկ չեն, որովհետեւ հոգիները չեն հոգի ծնում, որ նրանց վերագրվեր հայր կամ մայր անվանումը, այլ մարդիկ են մարդ ծնում։ Այնպես եւ մյուս՝ «Մի՛ շնացիր» (Ելք Ի. 13) պատվիրանը տեղին չէր լինի հոգիներին ուղղելը, երբ նրանց մեջ գոյություն չունի արական եւ իգական սեռերի [տարբերություն], ո՛չ ունակություն կա, ո՛չ էլ մղում սեռական հարաբերության։ Երբ չկա այդ մղումը, չի կարող լինել եւ հարաբերություն, իսկ եթե առհասարակ չկա սեռական հարաբերություն, չկա նաեւ օրինական հարաբերություն, այսինքն՝ ամուսնություն։ Իսկ երբ չկա օրինական հարաբերություն, չի կարող լինել նաեւ ապօրինի հարաբերություն, ցանկություն կամ հարաբերություն ուրիշի կնոջ հետ, այսինքն՝ շնություն։ Նույնպես եւ գողանալու կամ ավելին ցանկանալու արգելքը չի վերաբերում հոգիներին, քանի որ նրանք չունեն այն բանի կարիքը, ինչը կարիքավորները սովորաբար գողանում կամ ուժով խլում են բնական պակասության կամ պահանջի պատճառով, օրինակ՝ ոսկի կամ արծաթ, կենդանի կամ ինչ-որ այլ բան, որ առնչվում է սննդին, հագուստին կամ կենցաղային գործածմանը։ Անմահ բնության համար անօգուտ է այն ամենը, ինչը կարիքավորների համար որպես օգտակար բան ձգտումի առարկա է հանդիսանում։ Թեեւ այս մասին մանրամասն վերլուծությունը թող ներկայացվի նրանց, ովքեր ցանկանում են քննել յուրաքանչյուր առարկան կամ հակառակորդների հետ մրցելու առավել մեծ փափագ ունեն։ Իսկ մեզ համար բավական է այն, ինչն արդեն ասված է եւ ըստ այդմ՝ հաստատում է հարության ճշմարտությունը, եւ բարեպատեհ չէր լինի ավելի ծավալուն խոսել նույն բանի մասին, քանզի նպատակ ենք դրել ոչ թե որեւէ բան բաց չթողնել, ինչը հնարավոր է ասել, այլ բոլոր հավաքվածներին[3] հակիրճ ցույց տալ, թե ինչպես է պետք դատել հարության մասին, եւ ապացույցները, որոնց վրա հաստատվում է սույն ուսմունքը, համապատասխանեցնել ներկաների ունակություններին։

ԻԴ. Վերը ներկայացված քննությունից հետո մնում է դիտարկել մարդու նպատակից փոխառվող ապացույցը։ Այն արդեն պարզ է ամենից,

---

[3] *Այսինքն՝ աշակերտներին կամ ընկերներին, որոնց ներկայությամբ Աթենագորասն ընթերցում էր իր երկը։*

ինչ ասված է, սակայն անհրաժեշտ է դիտարկել ու լրացնել որքան հարկավոր է, որպեսզի չթվա, թե անուշադրության ենք մատնել այն, ինչի մասին այդքան հակիրճ ենք խոսել, եւ հեռացել ենք նյութից կամ նախապես արված բաժանումից։ Դրա համար եւ հանուն նրանց, որոնք շատ են զբաղվում այս նյութով, բավական է մատնացույց անել, որ ե՛ւ բնության, ե՛ւ մշակույթի ստեղծագործությունների համար պետք է լինի յուրաքանչյուրին հատուկ նպատակ։ Սրանում մեզ համոզում է համընդհանուր նպատակը եւ համոզիչ փորձառության վկայությունը։ Մի՞թե չենք տեսնում, որ այլ նպատակ նկատի ունեն մշակները, այլ՝ բժիշկները, եւ հետո, որ այլ է նշանակությունը նրա, որ ծագում է երկրից, այլ՝ կենդանիներինը, որոնք սնվում են դրանով եւ ծնվում ինչ-որ բնական ժառանգականությամբ։ Իսկ եթե սա անկասկած է, եւ ուժերը՝ թե՛ բնական, թե՛ արհեստական, ինչպես նաեւ դրանց արտադրությունները պետք է ունենան իրենց հատուկ նշանակությունը, ապա կատարելապես անհրաժեշտ է, որ մարդկանց նշանակությունը, որպես իրենց բնությամբ առանձնահատուկ արարածների, որեւէ ընդհանուր բան չունենա մյուսների հետ։ Քանզի անարդար է միեւնույն նպատակը սահմանել ե՛ւ նրանց համար, ովքեր չունեն բանական դատողություն, ե՛ւ նրանց համար, ովքեր գործում են բնածին օրենքով ու բանականությամբ, ունակ են բանական կյանքի եւ արդարության։ Այսպիսով՝ անտրամությունը չի կարող նրանց հատուկ նպատակը լինել, քանի որ դա ընդհանուր կլիներ այն արարածների հետ, որոնք զուրկ են ամեն տեսակի զգացողությունից. չի կարող նաեւ [մարդկանց հատուկ նպատակը լինել] վայելումն այն ամենի, որ սնում ու բավականություն է պատճառում մարմնին, եւ ոչ էլ հաճույքների առատությունը, քանի որ այդ դեպքում անհրաժեշտաբար առավելություն կունենար անասնական կյանքը, իսկ առաքինի կյանքը կլիներ աննպատակ, ինչը ես, ըստ էության, կարծում եմ՝ գազանների եւ անասունների նշանակությունն է, ոչ թե մարդունը, որին շնորհված է անմահ հոգի եւ բանական դատողություն։

Իե. Հավասարապես՝ մարդու նշանակությունը չի կարող լինել մարմնից անջատված հոգու երանությունը, քանի որ դիտարկում ենք ոչ թե այն մասերից որեւէ մեկի կյանքը կամ նշանակությունը, որոնցից բաղկացած է մարդը, այլ մարդու, որը կազմված է այդ երկուսից։ Հենց այդպիսին է յուրաքանչյուր մարդ, որ ստացել է այս կյանքը, եւ նրա կյանքը պետք է առանձնահատուկ նպատակ ունենա։ Իսկ եթե նպատակը վերա-

բերում է երկու մասերին էլ, մինչդեռ այն վերը բազմիցս շարադրված պատճառներով չի կարող ցույց տրվել ո՛չ այս կյանքում ապրող մարդկանց դեպքում, ո՛չ հոգու եւ մարմնի անջատումից հետո, քանզի մարդն արդեն մարդ չէ, երբ մարմինը քայքայվել կամ ամբողջովին վերացել է, եթե նույնիսկ հոգին շարունակի գոյություն ունենալ միայնակ, ուստի միանգամայն անհրաժեշտ է, որ մարդու նշանակությունը գտնվի այս երկմասանի կենդանի էակի ինչ-որ մեկ այլ վիճակում։ Իսկ եթե սա անհրաժեշտաբար հետեւում է, ապա անպայման պետք է լինեն մահացած ու վերջնականապես քայքայված մարմինների հարությունը եւ կրկին անգամ գոյությունն այդ մարդկանց, քանի որ բնական օրենքը սահմանում է նպատակ ոչ թե ընդհանրապես մարդու կամ մարդկանցից որեւէ մեկի համար, այլ հենց նրանց, ովքեր ապրել են այս՝ երկրային կյանքը. նրանք չեն կարող կրկին գոյություն ունենալ որպես հենց նույն մարդիկ, եթե այդ նույն մարմինները չվերադարձվեն հենց այդ նույն հոգիներին։ Սակայն որպեսզի նույն մարմինը հենց նույն հոգին ընդունի, դա հնարավոր չէ այլ կերպ, քան միայն հարությամբ։ Երբ դա տեղի ունենա, այդ ժամանակ է իրականանալու մարդկանց բնությանը համապատասխան նպատակը։ Որեւէ մեկը չէր մեղանչի, եթե ասեր, որ գիտակցական կյանքի եւ բանական դատողության նպատակն է անդադար եւ անընդհատ զբաղվելը նրանով, ինչին ամենից շատ ու նախեւառաջ հարմարեցված է բնական բանականությունը՝ Գոյի մտահայումն ու մշտական վայելքը Նրա պատվիրանների, թեեւ մարդկանցից շատերը, չափազանց աչառու կերպով եւ ուժգնորեն երկրայինին տրված լինելով, չեն հասնում այդ նպատակին։ Ընդհանուրին [բաժին ընկած] վիճակը չի փոխվում այնպիսիների բազմությունից, որոնք խուսափում են իրենց համար նախանշված նպատակից. յուրաքանչյուրը դատաստանի է ենթարկվելու, եւ յուրաքանչյուրին լինելու է համաչափ պարգեւ կամ պատիժ բարի կամ չար կյանքի համար։

Ռուսերենից թարգմանությունը՝
Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ՔՀՆ. ՍԱՀԱԿՅԱՆԻ
ԵՒ ԱՐՓԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ